

գրին մէջ կը կարդացուին հետեւեալ կերպով. «Յարուցեալ Մաւրիամ յաւուրան այնոսիկ գնաց յԱյնֆեսարիս, ի քաղաքն Յուդայ...»: Խոստական և եթովպական ուրիշ ձեռագիրներ ալ նոյն բառերը ունին (տե՛ս La Patrie de Saint Jean-Baptiste, էջ 123-126): Նոյնը կը հաստատէ նաեւ Փարիզի Ազգ. Մատենադարանին (Թ. 3) Երուսաղէմի վրացերէն ձեռագիր ծիսարանը (Թ-ԹԳ դար), որ Օգոստ. 28ին, Ս. Յովհաննէս Մկրտչի գլխատման տօնին առթիւ, կը ծանօթագրէ հետեւալը, «ի գիւղն Այնֆեսարիս, յեկեղեցւոջն Սրբոյն Եղիսաբեթի, կատարի այս կանոն...» (տե՛ս Revue Biblique, 1924. էջ 611): Ուրեմն, այս վկայութիւններէն կը հետեի թէ Արևելքի քրիստոնէայ ժողովուրդները աւանդաբար գիտէին որ Այնքեարիմը Յովհաննէս Կարապետի հայրենիքն էր. նոյն աւանդութիւնը կը հաստատեն նաև Պաղեստինի ուխտաւոր ուղեգրաց վկայութիւններն եւ ա՛յն եկեղեցիներուն շէնքերը, որ պատմականօրէն գոյութիւն ունէին անցելոյն մէջ: Նոյն պատմական տեղւոյն մէջ, գլխաւոր երկու եկեղեցիներ կային. մին նախապէս կը պատկանէր Յունաց, ինչպէս ցոյց կու տայ հոն գտնուած մողայիքի մը յունարէն արձանագրութիւնը, իսկ միւսն՝ Հայոց: Առաջինը ինչպէս յիշեցինք, ըստ աւանդութեան, Զաքարիա քահանային տան տեղւոյն վրայ կառուցուած էր յանուն Ս. Յովհաննէս ծննդեան, բայց ան դուրս կը մնայ մեր այս ուսումնասիրութեան: Մեր նպատակը պիտի լլայ հաստատել Այնքեարիմի հայկական եկեղեցիին և յորակից վանքին պատմականութիւնը:

## 2. Այնֆեսարիմի հայկական վանքին ու եկեղեցւոյն ծագումը.

Ղուկասու Աւետարանէն (Ա. 23-35) և աւանդութենէ կը հասկցուի թէ Զաքարիա քահանան Այնքեարիմի մէջ երկու տուն ունէր, մին քաղաքին մէջ, իսկ միւսը քաղաքէն դուրս, սարահարթի մը վրայ: Հայոց վանքն ու եկեղեցին շինուած էին այդ լեռան վրայ: Զաքարիայի միւս տան տեղը, հո՛ն, ուր Եղիսաբեթ «թագուցանէր զանձն ամիսս հինգ», ո՛ւր Ս. Կոյսը նազարէթէն այցելութեան եկած էր իր մօրաքրոջ աղջկան՝ Եղիսաբեթի. հայկական աւանդութիւնը այս յիշատակներուն կցած